https://doi.org/10.46991/hc.2022.17.1.279

ԿԱՐԵՆ ՊԱՎԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(Հիշատակի և գնահատանքի խոսք)

Մեկ տարի առաջ՝ 2021 թ. մայիսին, ստեղծագործական վերելքի շրջանում, 63-ը տակավին չբոլորած, կյանքից հեռացավ հետխորհրդային Հայաստանի ինքնատիպ և տաղանդավոր պատմաբաններից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Կարեն Պավելի Հայրապետյանը, ով անցել է հասարակական ու պետական աշխատանքի և գիտամանկավարժական գործունեության հարուստ ու միմյանց փոխլրացնող ճանապարհ:

Կարեն Հայրապետյանը ծնվել է 1958 թ. սեպտեմբերի 23-ին Կապան քաղաքում: 1975 թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 62 միջնակարգ դպրոցը: 1975 թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 1980 թվականին: Եղել է ֆակուլտետի լավագույն ուսանողներից մեկը՝ անվանական և Լենինյան թոշակառու:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտից, որտեղ 1980-1982 թթ. աշխատել է որպես ԽՄԿԿ պատմության ամբիոնի կաբինետի վարիչ: 1982 թ. ընտրվել է նույն ինստիտուտի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, 1984 թ.՝ ՀԼԿԵՄ Մյասնիկյանի շրջկոմի քարտուղար, 1985 թ.՝ երկրորդ քարտուղար:

Այնուհանդերձ, կրթությունը շարունակելու և գիտելիքները խորացնելու խնդիրը մնում էր օրակարգում: 1987-1990 թթ. Կ. Հայրապետյանը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ էր: Ավելի ուշ՝ 2003-2007 թթ. նա հեռակա կարգով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ստանում է նաև իրավաբանի որակավորում: 2006 թ. հաջողությամբ պաշտպանում է «Գաղթականության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. հունիս - 1919 թ. մայիս)» խորագրով թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո Կ. Հայրապետյանն իր ներդրումն է ունենում անկախ Հայաստանի պետական կառավարման նոր համակարգի ստեղծման գործին: 1991-2001 թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմում՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ՝ սկսելով ՀՀ նախարարների խորհրդի

նախագահի տեղակալի օգնականի դիրքից և հասնելով ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետի պաշտոնին:

2002-2008 թթ. աշխատել է ՀՀ ԿԳՆ գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչությունում՝ նախ որպես գիտական քաղաքականության և գիտության կազմակերպման բաժնի պետ, ապա՝ վարչության պետ, իսկ 2008-2011 թթ. զբաղեցրել ՀՀ ԿԳՆ Գիտության Պետական Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը: 2017-2018 թթ. եղել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի օգնական:

2012 թվականից մինչև մահ Կ. Հայրապետյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ համակարգում՝ զբաղեցնելով մի շարք պաշտոններ: 2012 թվականից մինչև իր մահը նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի համատեղությամբ գիտաշխատող էր:

2018 թվականից Վ. Բրյուսովի անվան համալսարանի գիտության բաժնի պետն էր և նույն համալսարանի փիլիսոփայության և պատմության ամբիոնի համատեղությամբ դասախոս:

Աշխատանքային գործունեության ողջ ընթացքում Կարեն Հայրապետյանին բնորոշ են եղել բարձր պրոֆեսիոնալիզմը, պարտաճանաչությունը, անաչառությունը և պատասխանատվության զգացումը:

Կ. Հայրապետյանի գիտամանկավարժական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ուներ ԵՊՀ-ն: 1991 թվականից նա համատեղության կարգով դասախոսել է մայր բուհի պատմության ու միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում, դասավանդել Հայոց պատմություն, Հայաստանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմություն, Դիվանագիտության պատմություն, Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Աշխարհաքաղաքականություն, Հայաստանի աշխարհաքաղաքականություն՝ ընդհանուր, Հայաստանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնահարցեր՝ մագիստրոսական դասընթացները: Նրա դասախոսություններն աչքի են ընկել նյութի թարմությամբ ու հագեցվածությամբ, տրամաբանական կուռ կառուցվածքով և եզրահանգումների հիմնավորվածությամբ:

Կ. Հայրապետյանի գիտական հետազոտությունների ժամանակագրական շրջանակն առավելապես ներառել է ռուսաստանյան 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից մինչև Հայաստանի առաջին հանրապետության ավարտն ընկած ժամանակահատվածը: Նրա գիտական հետաքրքրություններն հիմնականում վերաբերում էին նշված շրջանում հայ փախստականների (առավելապես արևմտահայ գաղթականության) հիմնահարցին և ներազգային միջավայրում այդ տարիներին դրսևորված բացասական մի երևույթի, որպիսին էր հատվածականության հարցը: Այդ խնդիրներին նվիրված գործերում ակնբախ դրսևորվում են Կարեն Հայրապետյան հետազոտողին բնորոշ պատմաբանի նուրբ հոտառությունը, բնատուր խելքը, ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրային նյութից առավելագույնը կորզելու և փաստերը խոսեցնելու կարողությունը: Ի դեպ, Կ. Հայրապետյանը հայ պատմագիտության մեջ առաջիններից է, որ փորձել է գիտական քննության ենթարկել հատվածականության խնդիրը, որն այդ շրջանի հայ հասարակության համար խիստ բացասական

հետևանքներ ունեցած երևույթ էր և որի անչափ վտանգավոր դրսևորումներին ականատես ենք նաև մեր օրերում:

Առաջին հայացքից հարուստ չէ Կ. Հայրապետյանի թողած պատմագիտական ժառանգությունը, որոնք տեղ են գտել մինչ մահը նրա հրատարակած 21 գիտական հոդվածներում: Բայց ուշագրավ են երկու հանգամանքներ. դրանք ճնշող մեծամասնությամբ տպագրվել են նրա կյանքի վերջին տասնամյակում և, գերազանցապես, հանրապետության հեղինակավոր պատմագիտական հանդեսներում: Դա նշանակում է, որ նա, ի վերջո, սկսել էր ձերբազատվել նախորդ տասնամյակներին գիտությունից իր ուշադրությունը շեղած բազմազբաղ այլ գործերից և ամբողջովին նվիրվել պատմագիտությանը, որտեղ, անշուշտ, լուրջ ասելիքներ ուներ: Այդ մասին են վկայում նրա դեռևս անտիպ, հրատարակության կարոտ երկու ստվարածավալ մենագրությունները, որոնցում ի մի են բերված նրա երկարամյա ուսումնասիրությունների հիմնական արդյունքները: Մոտ ապագայում դրանց հրատարակությունն, անշուշտ, նրա համար պատմագիտության մեջ մնայուն տեղ թողնելու և նրա հիշատակը հավերժացնելու լավագույն հուշարձանները կարող են լինել:

Պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյան
Պ.գ.թ., դոցենտ Հովիկ Գրիգորյան